



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

22 հեղինակություն 2016 թ. № 33 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ  
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»  
2016 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում հանրապետության նախագահի մրցանակներ հիմնելու մասին» ՆԿ-113-Ն կարգադրության 1-ին կետի «գ» ենթակետերի՝ *հրամայում եմ՝*

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» 2016 թվականի մրցույթի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում նշված խաղերն իրականացվում են «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի № 1 հավելվածի № 1 աղյուսակի 08 բաժնի 01 խմբի 01 դասի «21. «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի անցկացում» ծրագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանին:



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ



## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ» 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ

#### 1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» 2016 թվականի մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) նպատակն է՝

1) անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, նախադպրոցական երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում.

2) նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում:

2. Խնդիրներն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով նախադպրոցական երեխաների ֆիզիկական դաստիարակության, առողջության ամրապնդման, նրանց ֆիզիկական որակների բարելավում.

2) նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում.

3) նախադպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում.

4) նախադպրոցական հիմնարկներում ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման աշխատանքների խթանում:

#### 2. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

3. Մրցույթն անցկացվելու է 3 փուլով.

1-ին փուլ՝ Հայաստանի Հանրապետության 39 համայնքներում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում 2016 թվականի մայիսի 1-ից 12-ը.

2-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության մարզերում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում 2016 թ. մայիսի 17-ից հունիսի 1-ը.



3-րդ՝ եզրափակիչ փուլ (հանրապետական), 2016 թվականի հունիսի 19-ից 20-ը  
Երևանում:

Համայնքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը ներկայացվում է  
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի  
նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) մինչև 2016 թվականի ապրիլի 20-ը:

4. Մրցույթն անցկացվելու է՝
- 1) Արագածոտնի մարզ - ք. Աշտարակ, ք. Ապարան, ք. Թալին
  - 2) Արարատի մարզ - ք. Արտաշատ, ք. Արարատ, ք. Մասիս, ք. Վեդի
  - 3) Արմավիրի մարզ - ք. Արմավիր, ք. Էջմիածին, գ. Լեռնագոգ
  - 4) Գեղարքունիքի մարզ - ք. Գավառ, ք. Ճամբարակ, ք. Մարտունի, ք. Վարդենիս,  
ք. Սևան
  - 5) Լոռու մարզ - ք. Վանաձոր, ք. Ալավերդի, ք. Ստեփանավան, ք. Սպիտակ,  
ք. Տաշիր
  - 6) Կոտայքի մարզ - ք. Հրազդան, ք. Աբովյան, ք. Չարենցավան, ք. Եղվարդ
  - 7) Շիրակի մարզ - ք. Գյումրի, ք. Արթիկ, ք. Մարալիկ, գ. Ամասիա
  - 8) Սյունիքի մարզ - ք. Կապան, ք. Գորիս, ք. Սիսիան, ք. Քաջարան, ք. Մեղրի
  - 9) Վայոց ձորի մարզ - ք. Եղեգնաձոր, ք. Վայք
  - 10) Տավուշի մարզ - ք. Իջևան, ք. Դիլիջան, ք. Նոյեմբերյան, ք. Բերդ
  - 11) Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն - ք. Ստեփանակերտ:
5. Մրցույթին կարող են մասնակցել նշված համայնքների և մոտակա համայնքների  
նախադպրոցական հիմնարկները:

### 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

6. Մարզական միջոցառման անցկացման աշխատանքները համակարգում է  
Նախարարությունը:

7. 1-ին փուլի մրցումների կազմակերպման և անցկացման աշխատանքները  
համայնքներում իրականացնում են քաղաքապետարանները, իսկ 2-րդ փուլի մրցումների  
կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը դրվում է  
Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության վրա, իսկ  
եզրափակիչ փուլի մրցումների անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում  
են Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը և  
Նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ»  
պետական հիմնարկը:

### 4. ԾՐԱԳԻՐ

#### 8. **Վարժություն № 1. Փոխանցումավազք արգելքների հաղթահարումով** Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Մրցավարի հրահանգի համաձայն 1-ին մասնակիցը վազքով մոտենում է ներքնակին,  
կատարում է գլուխկոնձի առաջ (տարածությունը մեկնարկից ներքնակ՝ 2 մ), անցնում է  
պարկի միջով (պարկի երկարությունը՝ 3 մետր, պարկի տրամագիծը՝ 1 մետր, ներքնակից  
պարկ հեռավորությունը՝ 2 մետր), ոլորապտույտ վազքով արագ անցնում է 4 գուրգերի